

## Արձանագրություն N 2

### «ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված թիվ ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«03» «սեպտեմբերի» 2021թ.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **բոլոր** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավագործ և հայտարարվեց բացված (առցանց եղանակով):

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արմեն Խաչատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Լիլիա Չախոյանը:

### **ՕՐԱԿԱՐԳ**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը
2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում
3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման, յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ
4. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ
5. Տվյալներ՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ
6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին
7. ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին
8. ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով ընթացակարգի անգործության ժամկետ հաստատելու մասին

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով [www.armeps.am](http://www.armeps.am) կայքի միջոցով բացվել են 2021 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 15:00-ին:
- Նիստը տեղի է ունեցել 2021 թվականի օգոստոսի 20-ից սեպտեմբերի 3-ը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

Մասնակիցների անվանումները	Հասցե, էլ. փոստ
«Լայթ Գրուպ» ՓԲԸ	<a href="mailto:afprogress@gmail.com">afprogress@gmail.com</a>

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

**3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման, յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

- Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթները ներառում էին հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը:

- Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում ներառված փաստաթղթերը կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ, որ հայտում բացակայում են հավելվածում նշված պայմանագրերի պատճենները:

Հանձնաժողովը որոշեց՝

Նիստը կասեցնել, ծանուցել ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել նախկինում պատշաճ կատարված պայմանագրերի պատճենները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

Մասնակիցների կողմից ներկայացվել են բոլոր պահանջվող փաստաթղթերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ**

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց բավարար գնահատված հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/ հիմք ընդունելով տառերով գրվածը:

**Չափաբաժին 1**

Խ/Խ	Մասնակցի անվանումը	Ծառայության անվանումը			
		«Աուդիտորական» ծառայություններ			
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին	Նախահաշվային գին
1	«Լայթ Գրուպ» ՓԲԸ	8,775,000	1,755,000	10,530,000	10,530,000

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տվյալներ՝ ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի

Որոշվեց՝

1. « ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Լայթ Գրուպ»ՓԲԸ-ին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

**6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին**

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Հայտերի վերաբերյալ պաշտոնական հարցումներ և պատասխաններ չեն եղել:
- Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

**7. ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին**

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

**8. ՀԱԱԳ-ԽՀԲՄ-21/24 ծածկագրով ընթացակարգի անգործության ժամկետ հաստատելու մասին**

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի՝

Որոշվեց՝

1. Անգործության ժամկետ չի սահմանվում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի նախագահ՝**

Արմեն Խաչատրյան

**անդամներ՝**

Մամվել Ալլահվերդյան

Տիգրան Ավդալյան

**քարտուղար՝**

Լիլիա Չախոյան



